23443

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

331.2
Ու-91

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1940

15 JAN 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

331.2
Ու-31

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ՎՐԻՊԱԿ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 3 | 11 | Համ Կ(բ) Կենտրոնական | Համ Կ(բ)Կ Կենտրոնական |

ԼՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

23443
27 AUG 2013

Կազմեց՝ Լ. Վարդազարյան
Պատ. խմբագիր՝ Գ. Պարիս
Տեխ. խմբագիր՝ Վ. Պողոսյան

2368
40

Գլավլիտի լիազոր Ա—2177 պատվեր № 8. տիրաժ 1500. Հրատ. № 3
Պետհամալսարանի Հրատ. տպարան, Երևան Աբովյան № 104

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՑԵՎ ՀԱՄ Կ (բ) Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ 1936 թ. ԱՊՐԻԼԻ 9-ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Դպրոցների ուսումնական աշխատանքն էլ ավելի բարձրացնելու, տարրական, վոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների նյութական ապահովությունը բարձրացնելու և ամենավորակյալ մանկավարժներին խրախուսելու նպատակով, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և Համ Կ(բ) Կենտրոնական Կոմիտեն վորոշում են՝*

*1. 1936 թ. ապրելի 1-ից բարձրացնել տարրական, վոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների աշխատավարձը, սահմանելով նրանց համար ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները.*

| Աշխատողների կատեգորիաները | Քաղաքներ և բանվորական ավաններ | | | Գյուղական վայրեր | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| ա) ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՑԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ I-IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ· | | | | | | |
| I կարգ՝ միջնակարգ մանկավարժական կրթությամբ . . . . . . . . | 270 | 300 | 330 | 240 | 270 | 300 |
| II կարգ՝ ընդհանուր միջնակարգ կրթությամբ . . . . . . . . . | 240 | 260 | 280 | 215 | 235 | 250 |

| Աշխատողների կատեգորիաները | Քաղաքներ և բանվորական ավաններ | | | Գյուղական վայրեր | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| բ) ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՑԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ V-VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ.. | | | | | | |
| Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և օտար լեզուների ուսուցիչները՝ | | | | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ . . . . . . . . . . . . | 230 | 370 | 400 | 300 | 340 | 370 |
| II կարգ՝ 2-ամյա ուսուցչական ինստիտուտների շրջանավարտները . . . . . . . . . . . . | 300 | 330 | 360 | 270 | 300 | 320 |
| Նկարչության, գծագրության, աշխատանքի, ֆիզիկական կուլտուրայի, երաժշտության և երգեցողության ուսուցիչները՝ | | | | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ . . . . . . . . . . | 280 | 310 | 340 | 250 | 275 | 300 |
| II կարգ՝ միջնակարգ կրթությամբ | 250 | 270 | 290 | 220 | 240 | 260 |
| գ) ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ VIII-X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՑԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ. | | | | | | |
| Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և օտար լեզուների ուսուցիչները՝ | | | | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ | 360 | 400 | 425 | 325 | 370 | 400 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ . . . . | 310 | 340 | 370 | 290 | 320 | 340 |



| Աշխատողների կատեգորիաները | Քաղաքներ և բանվորական ավաններ | | | Գյուղական վայրեր | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| Գծագրության, աշխատանքի, ֆիզիկական կուլտուրայի, ռազմական գործի ուսուցիչները՝ | | | | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ . . . . . . . . . . . . . | 290 | 320 | 345 | 260 | 290 | 310 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ . . . . . | 250 | 275 | 295 | 230 | 250 | 270 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում | | |
|---|---|---|---|
| | մինչև 400 (կամ մինչև 10 դասարան) | 400-ից մինչև 880 (կամ 10 դասարանից ավելի) | 880-ից ավելի (22 դասարանից ավելի) |
| գ) ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐ. | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 400 | 500 | 600 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . | 350 | 400 | — |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ՝ . . . . . . . . . . . . . . | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 325 | 375 | 450 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . | 200 | 350 | — |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը դպրոցում | | |
|---|---|---|---|
| | Մինչև 280 հոգի (մինչև 7 դասարան) | 280-ից մինչև 560 հոգի (մինչև 14 դասարան) | 560 հոգուց ավելի (14-ից ավելի դասարան) |
| յե) ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐ. | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 330 | 360 | 400 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . . | 280 | 310 | 350 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 280 | 300 | 330 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . . | 250 | 275 | 300 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը | | |
|---|---|---|---|
| | մինչև 400 հոգի (մինչև 10 դասարան) | 400-ից մինչև 880 հոգի (10-ից մինչև 22 դասարան) | 880 հոգուց ավելի (22 դասարանից ավելի) |
| զ) ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉՆԵՐ. | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում . | 300 | 375 | 500 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . . | 250 | 325 | — |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ՝ | | | |
| քաղաքներում և բանվորական ավաններում | 250 | 325 | 400 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . | 200 | 275 | — |



| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը | | |
|---|---|---|---|
| | Մինչև 280 հոգի (մինչև 7 դասարան) | 280-ից մինչև 560 հոգի (մինչև 14 դասարան) | 560 հոգուց ավելի (14 դասարանից ավելի) |
| ե) ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉՆԵՐ. | | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 200 | 250 | 300 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . . | 175 | 200 | 250 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ՝ | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 175 | 200 | 250 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . . . | 150 | 175 | 225 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշակերտների թիվը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մինչև 80 հոգի, ստաժ | | | 80-ից մինչև 160 հոգի, ստաժ | | | 160 հոգուց ավելի, ստաժ | | |
| | Մինչև 5 տարի | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարի | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարի | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| ը) ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐ | | | | | | | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում . . . . . . . . | 320 | 350 | 380 | 330 | 360 | 390 | 360 | 390 | 420 |
| Գյուղական վայրերում . . . . | 270 | 300 | 330 | 290 | 320 | 350 | 320 | 355 | 380 |

| Աշխատողների կատեգորիաները | Աշխատողների թիվը | |
|---|---|---|
| | Մինչև 300 հոգի | 300 հոգուց ավելի |
| թ) ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐ. | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ . . . | 500 | 600 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ . . . . . . . . . . . . . | 325 | 400 |
| ժ) ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉՆԵՐ. | | |
| I կարգ՝ բարձրագույն կրթությամբ . . . . | 350 | 450 |
| II կարգ՝ լրիվ բարձրագույն կրթություն չունեցողներ . . . . . . . . . . . . . . . | 275 | 350 |

2. II կարգի համապատասխան ուսուցիչների դրույքներից 10 %-ով պակաս աշխատավարձի դրույքներ սահմանել ուսուցիչների հետևյալ խմբերի համար.

ա) տարրական դպրոցներում և ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների I-IV դասարաններում՝ լրիվ միջնակարգ կրթություն չունեցող ուսուցիչների համար.

բ) ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի V-VII դասարաններում՝ մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության և օտար լեզուների այն ուսուցիչների համար, վորոնք ունեն միայն միջնակարգ կրթություն, ինչպես և նկարչության, գծագրության, աշխատանքի, ֆիզիկական կուլտուրայի, յերաժշտության ու յերգեցողության այն ուսուցիչների համար, վորոնք չունեն լրիվ միջնակարգ կրթություն։

2. 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշխատավարձի դրույքները սահմանել 10 % ավելի, քան 10 տարվա աշխատանքի ստաժ ունեցող ուսուցիչների համար սահմանված դրույքները։

4. Տարրական, ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների ուսուցիչների և մանկավարժական տեխնիկումների դասատուների աշխատավարձի վերև սահմանված դրույքները վճարել առաջին չորս դասարաններում որական 4 ժամվա դասատվական



աշխատանքի համար և մյուս դասարաններում՝ որական 3 ժամվա դասատվական աշխատանքի համար։

Դասատվական աշխատանքի լրացուցիչ ժամերի համար լրացուցիչ վարձատրություն տալ սահմանված դրույքի համապատասխան։

5. Ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների V-X դասարանների մայրենի լեզվի, գրականության ու մաթեմատիկայի ուսուցիչների համար և մանկավարժական տեխնիկումների նույն առարկաների դասատուների համար սահմանել ամսական 40 ռուբլի լրացուցիչ վարձատրություն՝ աշակերտների գրավոր աշխատանքները ստուգելու համար։

6. Սահմանել, վոր ոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դասատվական աշխատանքն որական 2 ժամից ավելի չպետք է լինի։

Այդ կատեգորիաների դասատվական աշխատանքը վարձատրել հիմնական ռոճիկի նկատմամբ լրացուցիչ կերպով, ըստ դասատվական աշխատանքի ժամերի իրական քանակի, հաշվելով համապատասխան կատեգորիայի դասատվի աշխատավարձի դրույքի համաձայն։

7. Ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի V-X դասարաններում դասարանական ղեկավարների պարտականությունները կատարելու համար, բացի դասերի համար տրվող աշխատավարձից, սահմանել լրացուցիչ վարձատրություն հետևյալ չափով՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Խարկովում, Մինսկում, Թբիլիսիում, Բագվում, Տաշքենդում ամսական 50 ռուբլի, իսկ մյուս քաղաքներում, բանվորական ավաններում և գյուղական վայրերում՝ ամսական 30 ռուբլի։

8. Տարրական դպրոցների վարիչների համար սույն վորոշմամբ սահմանված աշխատավարձի ամսական դրույքների մեջ մտնում է 4 ժամվա ամենօրյա պարտադիր դասատվական աշխատանքի վարձատրությունը։ Դասատվական աշխատանքից ազատված տարրական դպրոցների վարիչները վարձատրվում են այդ նույն ամսական դրույքներով։

9. Հատուկ ռեժիմ ունեցող դպրոցների (մտավորապես հետ մնացած յերեխաների, խուլ ու համրերի, կույրերի և այլն) ուսուցիչների աշխատավարձի դրույքները հաշվել 25 տոկոսով

բարձր համապատասխան մասնագիտական դպրոցների ուսուցիչների համար սահմանված դրույքներից։

10. Համեմատած վերևում ընդունված դրույքների հետ, սահմանել հետևյալ վայրերի ու շրջանների մանկավարժական աշխատողների դրույքների ավելացում.

ա) 10 % Ուզբեկական ԽՍՀ (բացի Տաշքենդից) և Կալմիկական ԱԽՍՀ համար.

բ) 20 % Հեռավոր Արևելյան յերկրամասի համար, Արևելյան Սիբիրի յերկրամասի Անդրբայկալյան մասի շրջանների համար, Բուրյաթ-Մոնղոլական ԱԽՍՀ այն այմակների համար, վորոնք թվարկված են ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1934 թվի փետրվարի 5-ի վորոշման մեջ (ԽՍՀՄ Օրենքների Ժողովածու, 1934 թ., № 9, հոդ. 54), Յակուտական ԱԽՍՀ, Կարա-Կալպակական ԱԽՍՀ, Կիրգիզական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ, Կարսակպայի, Դոսսորի, Բալխաշի շրջանների և Կարագանդա քաղաքի համար, Թուրքմենական ԽՍՀ համար, Տաճիկական ԽՍՀ համար և Ուզբեկական ԽՍՀ Խորեզմի օկրուգի համար։

գ) 50 % նրանց համար, վորոնք աշխատում են ծայրագույն հյուսիսում, Արևելյան Սիբիրի շրջաններում, Կիրենսկի, Նիժնե-Իլիմսկոյեյի, Բրատսկոյեյի, Բոգուչանիի, Կեժմայի, Յենիսեյսկիի, Սեվերո-Յենիսեյսկիի, Ուդերեյսկիի, Կազաչինսկո-Լենայի, Կազաչինո—Յենիսեյսկիի, Տուրուխանսկոյեյի, Ուստ-Կուտի շրջաններում, Տովալարի բնիկների խորհրդում, Իգարկա քաղաքում և Բուրյաթ-Մոնղոլիայի, Բունտովոյի, Սեվերո-Բայկալի, Յերավնինի և Բարգուզինի հյուսիսային այմակներում։

Ծանոթություն.—Թուրքմենական և Տաճիկական միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին իրավունք է տրվում չերտավորել սույն վորոշման 10-րդ հոդվածի «բ» կետով սահմանված 20 % հավելումը՝ այդ հանրապետությունների տարիֆային գոտիների գոյություն ունեցող բաժանման համաձայն, վորպեսզի այդ հավելումները 10 %-ից չիջնեն և 30 %-ից չբարձրանան համեմատած սույն վորոշմամբ սահմանված դրույքների հետ։

11. Նկատի ունենալով, վոր դպրոցների և մանկավարժական տեխնիկումների աշխատողների համար սույն վորոշմամբ աշխատավարձի դրույքները սահմանված են հաշվի առնելով նրանց մանկավարժական աշխատանքի ստաժը, 1936 թ. ապրիլի 1-ից, բացի առաջին գոտու առանձին վայրերից, ամենուրեք



չեղյալ հայտարարել դպրոցական աշխատողների և մանկավարժական տեխնիկումների աշխատողների աշխատավարձի գործող օրենքներով նախատեսնված պարբերական հավելումները։

12. Սույն վորոշման հիման վրա ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու նպատակով պետական ու տեղական բյուջեներով 1936 թ. մնացած 9 ամսվա համար բաց թողնել 1 միլիարդ 22,9 միլիոն ռուբլի (ներառյալ սոցիալական ապահովագրության մուծումները և տեղկոմների պահպանման հատկացումները), այդ թվից՝ ՌԽՖՍՀ համար 658,1 միլիոն ռուբլի, Ուկրաինական ԽՍՀ համար՝ 214,1 միլիոն ռուբլի, Բելոռուսական ԽՍՀ համար՝ 42,7 միլիոն ռուբլի, ԱԽՖՍՀ համար՝ 72,3 միլիոն ռուբլի, Ուզբեկական ԽՍՀ համար՝ 22,2 միլիոն ռուբլի, Թուրքմենական ԽՍՀ համար՝ 7,4 միլիոն ռուբլի, Տաճիկական ԽՍՀ համար՝ 5,5 միլիոն ռուբլի։

13. Սույն վորոշումը ճշտիվ ու ժամանակին կատարելու պատասխանատվությունը դնել միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհրդի և ազգային կոմունիստական կուսակցությունների Կենտրոնական Կոմիտեների վրա։

| | |
|---|---|
| ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ՝ | Համ Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Քարտուղար՝ |
| Վ. ՄՈԼՈՏՈՎ | Ի. ՍՏԱԼԻՆ |

«ՊՐԱՎԴԱ» 1936 թ. ապրիլի 10, № 100 (6706)

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1936 Թ. ԱՊՐԻԼԻ 10-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Սահմանել, վոր ուսուցչության աշխատավարձը վճարվում է շրջանային և քաղաքային ժողովրդական կրթության բաժինների միջոցով քաղաքներում, շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում ամիսը յերկու անգամ՝ յուրաքանչյուր ամսի 16-ին

և 1-ին ամսվա անցած կեսի համար, իսկ գյուղական վայրերում ամիսը մեկ անգամ՝ տվյալ ամսի 20-ին։

2. Սահմանել, որ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական դպրոցների ուսուցիչների աշխատավարձի վճարումը կատարվում է համապատասխան շրջանային ու քաղաքային ժողովրդական կրթության բաժինների կողմից՝ դպրոցների դիրեկտորների և վարիչների միջոցով։

Դրան համապատասխան գյուղական ուսուցիչների աշխատավարձի ծախսերը հանել գյուղական բյուջեներից և անցկացնել այսուհետև շրջանային բյուջեներով։

3. Պարտավորեցնել քաղաքային խորհուրդների և շրջգործկոմների նախագահություններին ապահովել ուսուցիչների աշխատավարձի վճարման համար անհրաժեշտ գումարների փոխանցումը շրջանային և քաղաքային ժողովրդական կրթության բաժինների հատուկ հաշիվներին ոչ ուշ 5 օրից մինչև աշխատավարձի վճարման համար սահմանված ժամկետը։

4. Սահմանել, որ դպրոցների դիրեկտորները և վարիչները ուսուցիչների աշխատավարձը վճարելու համար ստացած դրամը պարտավոր են հանձնել յուրաքանչյուր ուսուցչին սույն վորոշմամբ սահմանված ժամկետներում և անմիջապես հետ վերադարձնել ուսուցիչների ստորագրած ռաճկացուցակները շրջանային և քաղաքային ժողովրդական կրթության բաժիններին։

5. Սահմանել, որ քաղաքային և շրջանային ժողովրդական կրթության բաժինների վարիչները դատի կտրվեն ուսուցիչների հասանելիք աշխատավարձը ուշացնելու կամ լրիվ չտալու համար։

Սահմանել, որ քաղաքային և շրջանային ֆինանսական բաժինների վարիչները դատի կտրվեն ուսուցիչների աշխատավարձը տալու համար բյուջեյով նախատեսված գումարը ուշացնելու կամ լրիվ չտալու համար։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

«ՊՐԱՎԴԱ» 1936 թ. ապրիլի 11, № 101 (6707)



# ՌԽՖՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1939 թ. ՄԱՅԻՍԻ 19-Ի № 884 ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատած ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի հրահանգին՝ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Համ Կ(բ) Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշման կենսագործման մասին (տես ստորև)։

2. Առաջարկել մյուս միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի վերև նշված վորոշման կենսագործման վերաբերյալ հրահանգներ հաստատելիս ղեկավարվել այս հրահանգով։

(ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի Հրամանների և կարգադրությունների ժողովածու, 1936 թ. № 12)։

*Հաստատված է ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի կողմից 1936 թ. 19/V*

## ՌԽՖՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀՐԱՀԱՆԳԸ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թվի ապրիլի 9-ի «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» վորոշումը կենսագործելու մասին (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. 19/V վորոշման հավելված)։

### I. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի չափը նոր դրույքների կապակցությամբ վորոշում է անձամբ շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի վա-

րիչը ըստ այն դպրոցների, վորոնք մանկավարժական անձնակազմի աշխատավարձի տեսակետից գտնվում են քաղաքային և շրջանային բյուջեյի մեջ, իսկ ըստ այն դպրոցների, վորոնք գտնվում են ԱԽՍՀ, յերկրամասերի և մարզերի բյուջեյում,— համապատասխան հանրապետությունների կոմիսարիատները և յերկրամասային (մարզ.) ժողկրթբաժնի վարիչները։

2. Դպրոցի վարիչը կամ դիրեկտորն անձամբ կատարում է յուրաքանչյուր ուսուցչի և դպրոցական աշխատողի կրթության և ստաժի փաստաթղթերի նախնական ստուգումը, կազմում է իր դպրոցի ուսուցիչների և դպրոցական աշխատողների ցուցակը սրան կցված ձևով (տես հավելված № 1*) և իր դպրոցի ուսուցիչների փաստաթղթերի հետ միասին անձամբ ներկայացնում է շրջանայի կամ քաղաքային ժողովրդական կրթության բաժնին։

3. Շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի վարիչը դպրոցի դիրեկտորի կամ վարիչի ներկայությամբ նայում է ուսուցիչների և մյուս դպրոցական աշխատողների ցուցակներն ու փաստաթղթերը, ստուգում է նրանցից յուրաքանչյուրին ըստ կրթության ու ստաժի կարգ նշանակելու ճշտությունը, ամսական աշխատավարձի չափը դուրս բերելու ճշտությունը և հաստատում է աշխատավարձի կարգերն ու դրույքները։

4. Ամփոփման տվյալներն ըստ շրջանի (քաղաքի) շրջ.(քաղ.) ժողկրթության բաժնի վարիչները ներկայացնում են ԱԽՍՀ Լուսժողկոմատներին կամ յերկրամասային (մարզ.) ժողկրթբաժիններին ցույց տալով ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու Համ Կ (բ)Կ Կենտկոմի ս. թ. ապրիլի 9-ի վորոշման մեջ մատնանշված ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի համար սահմանված ֆոնդը ըստ 1936 թ. բյուջեյի և ընթացիկ տարվա մնացած ամիսների համար սահմանված նոր ֆոնդը։

5. Դպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների ու մյուս աշխատողների կարգերը վորոշելու աշխատանքներին ժողովրդական կրթության բաժինները ներգրավում են Տարրական և Միջնակարգ Դպրոցի Աշխատողների Պրոֆեսիոնալ Միության ներկայացուցիչներին։

---

*) Այս գրքույկում չի բերված (Լ. Վ.)



## II. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍՏԱԺԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Կրթությունը սահմանվում է համապատասխան ուսումնական հաստատություն ավարտելու մասին յեղած դիպլոմներով, վկայագրերով կամ վկայականներով։

(Ուսումնական հաստատությունների ցանկը տես հավելված № 2*)։

Մանկավարժական ստաժը վորոշվում է ըստ աշխատանքային ցուցակների, վկայականների կամ աշխատանքի վայրից տրված պաշտոնական տեղեկանքների։

7. Յեթե դպրոցի ուսուցչի, ուսումնական մասի վարիչի կամ դիրեկտորների մոտ բացակայում են կրթության փաստաթղթեր, այդ աշխատողներին ըստ կրթության և ստաժի այս կամ այն կարգին դասելը կարող է կատարվել Տարրական և և Միջնակարգ Դպրոցի Աշխատողների Պրոֆմիության 2 անդամի կողմից հաստատված և պրոֆմիության շրջկոմի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա, պայմանով, վորպեսզի 6-ամսյա ժամկետի ընթացքում ներկայացվեն իսկական փաստաթղթերը կամ նրանց պատճենները։

8. Մանկավարժական աշխատանքի ստաժի մեջ մտցվում են վորպես ուսուցիչ, դպրոցի վարիչ, ուսումնական մասի վարիչ, դպրոցի կամ մանկավարժական տեխնիկումի դիրեկտոր կատարած աշխատանքի ամբողջ ժամանակաշրջանը և ժողովրդական կրթության մարմիններում դպրոցական տեսչի ու հրահանգչի պաշտոններում կատարած աշխատանքը, ուսումնա-մեթոդական աշխատանքը մեթոդական և մանկավարժական կաբինետներում, մանկավարժական կայաններում. մանկավարժական կրթություն ունեցող մանկավարժ-նախադպրոցականների աշխատանքը. աշխատանքը մանկատներում, վորպես վարիչ, դիրեկտոր, ուսումնական մասի վարիչ և դաստիարակ, յեթե այդ աշխատողներն ունեն մանկավարժական կրթություն կամ մանկավարժական ստաժ. աշխատանքը վորպես ազատված դասարանական ղեկավար միջնակարգ և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում. մանկավարժական ուսումնական հաստատություններում, համալսարաններում և գիտական հիմնարկներում գտնված ժամանակաշըր-

---

*) Այստեղ բերված է 37-րդ եջում (Լ. Վ.)։

ջանը, յեթե սրան նախորդել ու անմիջապես հաջորդել է մանկավարժական գործունեյություն. բոլոր տարրական դպրոցներում կատարած աշխատանքը՝ նախկին մինիստրական, զեմստվոյական, ժողովրդական, յեկեղեցական-ծխական, գրագիտական դպրոցներում, բարձրագույն տարրական դպրոցներում, գիմնազիաներում, ռեալական ուսումնարաններում, առևտրական ուսումնարաններում, ինչպես նաև մեծահասակների դպրոցներում, այդ թվում կիսագրագիտական դպրոցներում և լիկկայաններում, յեթե լիկկայանի աշխատանքը կրել է ռեգուլյար բնույթ, այսինքն՝ շարունակվել է ամբողջ տարվա ընթացքում. տեխնիկումներում, պրոֆտեխնիկական դպրոցներում և ֆաբգործուսներում (հանրակրթական առարկաների դասատուների համար) և ամեն տեսակի այլ ուսումնական հաստատություններում, ինչպես մինչհեղափոխական ժամանակաշրջանի (պետական, զեմստվոյական, մասնավոր և այլն), նույնպես և հետհեղափոխական ժամանակաշրջանի, վորոնք իրենց ծրագրով համապատասխանում են ստորին և միջնակարգ ուսումնական հաստատություններին:

Ծանոթություն.—Դասարանական վերակացուների, վերակացուհիների և դասարանական դամաների պաշտոններում կատարած աշխատանքը, կրոնական պաշտամունքի առարկաների դասավանդումը մինչհեղափոխական շրջանում մանկավարժական աշխատանքի ստաժ չի համարվում:

## III. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշման, բարձրանում է միմիայն տարրական դպրոցների ուսուցիչների ու վարիչների, վոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների և մանկավարժական տեխնիկումների ուսուցիչների, դասարանական ղեկավարների, ուսումնական մասի վարիչների ու դիրեկտորների աշխատավարձը:

10. 320-ից վոչ պակաս աշակերտ (և 8-ից վոչ պակաս դասարան) ունեցող տարրական դպրոցների վարիչները կարող են ազատվել դասավանդման աշխատանքից ԱԽՍՀ Լուսժողկոմի և յերկրամասային (մարզային) ժողկրթբաժնի վարիչի վորոշմամբ:

11. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշմամբ տետրեր ուղղելու համար սահմանված ամսական 40 ռ. չափով վարձատրությունը վճարվում է ուսուցչի հիմնական դրույքին



լրացուցիչ կերպով վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների V-X դասարաններում ու մանկավարժական տեխնիկումներում ռուսաց և մյուս մայրենի լեզուների, գրականության ու մաթեմատիկայի որական 3 ժամվա դասատվական աշխատանքի համար: Իսկ յեթե ուսուցչի ամենօրյա դասատվական աշխատանքը տևում է 3 ժամից ավելի, ապա լրացուցիչ վարձատրությունը տետրերն ուղղելու համար համապատասխանորեն բարձրանում է:

Օրինակ. վոչ լրիվ միջնակարգ դպրոցի մայրենի լեզվի դասատուն, վորի տարիֆային դրույքը սահմանված է 400 ռուբլի, տետրեր ուղղելու համար ստանում է ամսական 40 ռուբլի օրական յերեքժամյա դասատվական աշխատանքի դեպքում, իսկ օրական $4^1/_2$ ժամվա աշխատանքի դեպքում՝ ամսական 60 ռուբլի:

12. Մանկավարժական տեխնիկումների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դրույքը վորոշելու դեպքում յելնել ցերեկային և գիշերային բաժանմունքների սովորողների ընդհանուր կոնտինգենտից: Հեռակա սեկտոր ունեցող մանկավարժական տեխնիկումների սովորողների թվի մեջ չի մտնում այդ սեկտորների սովորողների կոնտինգենտը:

9368
240

Մանկավարժական տեխնիկումների հեռակա սեկտորների վարիչները վարձատրվում են 300-ից պակաս սովորողների կոնտինգենտ ունեցող մանկավարժական տեխնիկումների ուսումնական մասի վարիչների համար իրենց կրթության համապատասխան սահմանված դրույքներով:

13. ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշմամբ սահմանված ուսուցիչների դրույքները վճարվում են օրական միջին հաշվով 4 ժամվա մանկավարժական աշխատանքի համար I-IV դասարաններում և օրական, միջին հաշվով, 3 ժամվա մանկավարժական աշխատանքի համար վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների V-X դասարաններում ու մանկավարժական տեխնիկումներում:

Սրան համապատասխան մատնանշված դրույքները վճարվում են I-IV դասարանների ուսուցիչներին քաղաքներում և բանվորական ավաններում 20 ժամվա համար վեցօրյակում և գյուղական վայրերում 24 ժամվա համար յոթնօրյակում. վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների V-X դասարանների ուսուցիչներին ու մանկավարժական տեխնիկումների դասատու-



CCPA

ներին 15 ժամվա համար վեցօրյակում քաղաքներում և բանվորական ավաններում ու 18 ժամվա համար յոթնօրյակում գյուղական վայրերում։

Յեթե ուսուցիչը յոթնօրյակում կամ վեցօրյակում ունի նախատեսված նորմաներից ավելի կամ պակաս ժամեր, նրա ամսական աշխատավարձի չափը վորոշվում ե ամսական դրույքը բաժանելով վեցօրյակի կամ յոթնօրյակի ժամերի նորմայի վրա և ստացած արդյունքը բազմապատկելով նրա փաստական բեռնվածության ժամերի թվի վրա վեցօրյակում կամ յոթնօրյակում։

**Որինակ** 1-ին. Քաղաքում միջնակարգ դպրոցի VIII-X դասարանների 5 տարուց պակաս ստաժ ունեցող 1-ին կարգի ուսուցիչը վեցօրյակում ունի 18 ժամ։ Այդ ուսուցչի ամսական դրույքը կազմում ե 360 ռուբլի որական 3 ժամվա կամ վեցօրյակում 15 ժամվա աշխատանքի համար։

18 ժամվա համար վեցօրյակում այդ ուսուցչի ամսական աշխատավարձը կկազմի՝ $\frac{360\times18}{15}$ = 432 ռուբլի։

**Որինակ** 2-րդ. գյուղական տարրական դպրոցի IV դասարանի ուսուցիչը, վորն ունի 8 տարվա ստաժ և ըստ կրթության դասվում ե I կարգը, շաբաթական ունի 26 ժամ։ Այդ ուսուցչի ամսական դրույքը որական 4 ժամվա կամ շաբաթական 24 ժամվա աշխատանքի համար կազմում ե 270 ռուբլի։ Շաբաթական 26 ժամվա համար այդ ուսուցչի ամսական աշխատավարձը կկազմի՝

$\frac{270\times26}{24}$ =292 ռուբ. 50 կոպ.

Այս ձևով վորոշված ամսական աշխատավարձը վճարվում ե ուսուցչին յուրաքանչյուր ամիս ամբողջ տարվա ընթացքում, անկախ տարբեր ամիսներում յեղած յոթնօրյակների կամ վեցօրյակների ու աշխատանքի որերի թվից։

**Ծանոթություն**.—Այն դիսցիպլինների դասատուների համար, վորոնց ուսումնական տարվա զանազան ամիսներին հատկացված են տարբեր քանակությամբ ժամեր, վեցօրյակի կամ յոթնօրյակի միջին ծանրաբեռնվածությունը պետք ե վորոշել տարեկան ուսումնական պլանով տվյալ դիսցիպլինի համար նախատեսնված ժամերի թիվը բաժանելով ուսումնական տարվա վեցօրյակների կամ յոթնօրյակների թվի վրա։



14. Տարրական դպրոցի III-IV դասարանների դասատուները առարկայական դասավանդման դեպքում վարձատրվում են դասատվական ժամերի փաստացի քանակի համար տարրական դպրոցի ուսուցիչների համապատասխան կատեգորիաների դրույքներով։

Այնտեղ, վորտեղ ուսուցիչը վարձատրվել ե դասարաններն աշակերտներով ծանրաբեռնված լինելու պատճառով, ինչպես նաև միաժամանակ (միևնույն հերթին) յերկու և ավելի դասարանների հետ պարապելու համար, այդ լրացուցիչ վարձատրությունը վերանում ե 1936 թ. ապրիլի 1-ից։ Այն դեպքերում, յերբ I-IV դասարանների ուսուցիչն որական, միջին հաշվով, 4 ժամից ավելի յե պարապում, նա լրացուցիչ վարձատրություն ե ստանում իր պարապած ժամերի համապատասխան։

15. Յեթե ուսուցիչը միաժամանակ աշխատում ե տարրական դպրոցում և վոչ-լրիվ միջնակարգ կամ միջնակարգ դպրոցում, կամ միաժամանակ աշխատում ե միևնույն դպրոցի I-IV, V-VII և VIII-X դասարաններում, նա տարիֆիկացիայի յե յենթարկվում յուրաքանչյուր դպրոցի համար առանձին և I-IV, V-VII և VIII-X դասարանների համար առանձին-առանձին։

Յեթե վոչ-լրիվ միջնակարգ կամ միջնակարգ դպրոցի ուսուցիչն ավանդում ե տարբեր վարձատրվող մի քանի առարկա (որինակ, ֆիզիկա և գծագրություն), նա պետք ե տարիֆիկացիայի յենթարկվի յուրաքանչյուր առարկայից առանձին։

16. Հատուկ ռեժիմ ունեցող տարրական, վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցներին և մասսայական դպրոցների համապատասխան հատուկ դասարաններին են պատկանում մտավորապես հետ մնացող, խուլ ու համր, կույր յերեխաների դպրոցներն ու դասարանները, նևրվային յերեխաների և պսիխոնևրոտիկ յերեխաների դպրոցները, անտառային դպրոցները, դպրոց-սանատորիաները և այդ կատեգորիաներին համապատասխանող դպրոցները մանկատներին կից։

Հատուկ ռեժիմ ունեցող դպրոցներում V-VII դասարանների դասատուների ժամային որական ծանրաբեռնվածությունը համապատասխանում ե վոչ լրիվ միջնակարգ դպրոցների ծանրաբեռնվածությանը, իսկ I-IV դասարաններինը՝ տարրական դպրոցների ծանրաբեռնվածությանը։

17. Մանկավարժական տեխնիկումների սոցիալ-տնտեսագիտական և մանկավարժական դիսցիպլինների դասատուները, ինչպես նաև հասարակագիտության ուսուցիչները վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցներում, վարձատրվում են մայրենի լեզվի, գրականության և ֆիզիկայի ուսուցիչների համար սահմանված դրույքներով։

18. Մանկավարժական տեխնիկումների հեռակա սեկտորների դասատուները վարձատրվում են մանկավարժական տեխնիկումների դասատուների համար սահմանված դրույքներով (միևնույն քանակության աշխատանքի ժամերի համար)։

19. Այն ավելացումն աշխատավարձին առանձին վայրերում, վոր սահմանված է ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշման 10-րդ հոդվածով, սահմանվում է ուսուցչի, ուսումնական մասի վարիչի, դպրոցի կամ մանկավարժական տեխնիկումի դիրեկտորի և վարիչի այդ վորոշման համաձայն վճարվող վողջ վարձին լրացուցիչ կերպով։

20. Դպրոցների և «Ա» խմբի շրջանների դպրոցների ուսուցիչները և մյուս աշխատողները վարձատրվում են ընդհանուր հիմունքներով։

21. Դասատվական աշխատանքի ստաժը վորոշելու դեպքում աշխատավարձի դրույքները 1936 թվի համար սահմանելու համար յենել 1935 թ. հոկտեմբերին սահմանված ստաժից։

Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի դրույքներում փոփոխությունները հետագա ժամանակի համար, նայած ստաժի և կրթության փոփոխություններին, պետք է կատարվի հետագա բյուջետային տարվա հունվարի 1-ից։

22. Դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դրույքները վորոշվում են նայած վորոշմամբ սահմանված յերկու հատկանիշների՝ աշակերտների թվի և դասարանների թվի։

Օրինակ 1-ին. Յեթե վոչ-լրիվ միջնակարգ դպրոցն ունի 300 աշակերտ և 7 դասարան, դիրեկտորի և ուսումնական մասի վարիչի դրույքը վորոշվում է մինչև 280 աշակերտ ունեցող դպրոցի դիրեկտորի և վարիչի դրույքի նման։

Օրինակ 2-րդ. Յեթե դպրոցն ունի մինչև 280 աշակերտ և 8 դասարան, դիրեկտորը և ուսումնական մասի վարիչը վարձատրվում են մինչև 280 աշակերտ (մինչև 7 դասարան) ունեցող դպրոցի դիրեկտորի և ուսումնական մասի վարիչի դրույքով։



Օրինակ 3-րդ. Յեթե դպրոցն ունի 300 աշակերտ և 8 դասարան, դիրեկտորը և ուսումնական մասի վարիչը վարձատրվում են 280-ից մինչև 560 աշակերտ (7 դասարանից ավելի) ունեցող դպրոցի դրույքներով։

Հատուկ ռեժիմ ունեցող դպրոցների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների համար դրույքները վորոշվում են միմիայն դասարանների թվով՝ ըստ վորում նրանց վրա չի տարածվում Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշման 9-րդ կետը։

23. Դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների աշխատավարձի դրույքները չեն կարող տարվա ընթացքում փոփոխության յենթարկվել մաղման հետևանքով աշակերտների թիվը փոփոխվելու կապակցությամբ։

24. Հերթական արձակուրդի ժամանակ աշխատավարձը վճարվում է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. հուլիսի 25-ի № 1563 վորոշման հիման վրա, նոր դրույքներով (ԽՍՀՄ Օ. Ժ. 1935 թ. № 40, եջ 333)։

25. ԽՍՀՄ ԺԿԽ և Համ Կ(բ)Կ Կենտկոմի վորոշումը «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի մասին» իրավունք չի տալիս սահմանել ուսումնական մասի վարիչների և դասարանական ղեկավարների նոր պաշտոններ դպրոցներում, վորոնց շտատներով և սմետաներով 1936 թ. համար այդպիսի պաշտոններ չի նախատեսնված։

---

## ԲՈԼՈՐ ԺՈՂԿՐԹԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ ՅԵՎ ՏՄԴ ՔԱՂԿՈՄ-ՇՐՋԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Համ Կ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թվի ապրիլի 9-ի «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի բարձրացման մասին» վորոշման կիրառման կապակցությամբ Լուսժողկոմատը և ՏՄԴ Կենտկոմը սորեն հրապարակում են Ձեզ ի ղեկավարություն ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների տարիֆիկացիայի վերաբերյալ հարց ու պատասխանի թերթիկը։

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմ՝ Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հայկական ԽՍՀ ՏՄԴ Կենտրոնական Կոմիտեյի
Նախագահ՝ Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹԵՐԹԻԿ

*Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների տարիֆիկացիայի վերաբերյալ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի՝* «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի բարձրացման մասին» *վորոշման կիրառման կապակցությամբ*

I. Տարրական դպրոցների և ոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների I-IV դասարանների ուսուցիչների և տարրական դպրոցների վարիչների աշխատավարձը վճարելու կարգը

| *Հ Ա Ր Ց Ե Ր* | *Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր* |
|---|---|
| *1. Ի՞նչպես վարձատրել նախապատրաստական դասարանների ուսուցիչներին։* | *1. Տարրական դպրոցների ուսուցիչների դրույքներով։* |
| *2. Ի՞նչպես վարձատրել բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներին։* | *2. Տարրական դպրոցների ուսուցիչների համար սահմանված դրույքների առաջին կարգով։* |
| *3. Ի՞նչպես վարձատրել Վորակի բարձրացման կենտրոնական ինստիտուտի (Մոսկվա) հիմնական ֆակուլտետն ավարտած ուսուցիչներին։* | *3. Առաջին կարգով։* |
| *4. Ի՞նչպես վարձատրել ինդուստրիալ մանկավարժական տեխնիկում ավարտած ուսուցիչներին։* | *4. Դպրոցական բաժանմունքն ավարտածներին՝ առաջին կարգով, իսկ մյուս բաժանմունքները՝ յերկրորդ կարգով։* |
| *5. Ի՞նչպես վարձատրել մանկ-ուսումնարանների քաղլուսբաժանմունքը կամ նախադպրոցական բաժանմունքն ավարտած ուսուցիչներին։* | *5. Յերկրորդ կարգով։* |
| *6. Ի՞նչպես վարձատրել մանկ-ուսումնարանի (դպրոցական) յերեք կուրսն ավարտած, բայց ատեստատ չստացած ուսուցիչներին։* | *6. Յերկրորդ կարգով՝ հանած 10 %։* |
| *7. Ի՞նչպես վարձատրել իննամյակ կամ մանկավարժական թեքում ունեցող II աստիճանի դպրոց ավարտած ու դպրոցում 4-ամսյա մանկավարժական պրակտիկա անցած ուսուցիչներին։* | *7. Յերկրորդ կարգով։* |
| *8. Ի՞նչպես վարձատրել վեցամյա պրոգիմնազիա և 2-ամյա մանկավարժական դասընթացներ ավարտած ուսուցիչներին։* | *8. Առաջին կարգով։* |
| *9. Ի՞նչպես վարձատրել քառամյա պրոգիմնազիա և 2-ամյա մանկավարժական դասընթացներ ավարտած ուսուցիչներին։* | *9. Յերկրորդ կարգով։* |
| *10. Ի՞նչպես վարձատրել յոթնամյա յեպարխիալ դպրոց ավարտածներին։* | *10. Առաջին կարգով։* |
| *11. Ի՞նչպես վարձատրել վեցամյա յեպարխիալ դպրոց ավարտած ուսուցիչներին։* | *11. Յերկրորդ կարգով։* |
| *12. Տրվո՞ւմ է, արդյոք, 10 %-ային հավելում տարրական դպրոցների վարիչներին, վորոնք ունեն 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժ։* | *12. 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժ ունեցող տարրական դպրոցի վարիչներին 10 %-ային հավելում տրվում է աշխատավարձի այն մասի համար, վորը նրանց տրվում է մանկավարժական* |

| | |
|---|---|
| | ժամերի համար. 10 %-ային հավելումը չի տարածվում նրանց աշխատավարձի այն մասի վրա, որը վճարվում է նրանց դպրոցի վարչության համար։ |
| 13. Կարո՞ղ է, արդյոք, իջնել տարրական դպրոցի վարիչի աշխատավարձի դրույքն այն դեպքում, յերբ նրա կրթությունը միջնակարգ մանկավարժականից ցածր է։ | 13. Տարրական դպրոցի միջնակարգ մանկավարժական կրթություն չունեցող վարիչի դրույքը չի կարող իջեցվել, վորովհետև այդ դրույքը սահմանված է անկախ այդ պաշտոնը գրավող անձանց կրթությունից։ |
| 14. Կարո՞ղ է, արդյոք, փոփոխության յենթարկվել դպրոցի վարիչի դրույքը դպրոցի դասարանների և աշակերտների թվի՝ ավելանալու կամ պակասելու կապակցությամբ։ | 14. Ուսումնական տարվա սկզբին դպրոցի դասարանների և աշակերտների կոնտինգենտի փաստական թիվը ավելանալու կամ պակասելու կապակցությամբ համապատասխանորեն պետք է փոփոխության յենթարկվի նաև դպրոցի վարիչի դրույքը՝ այդ պաշտոնի համար սահմանված աշխատավարձի չափի սահմաններում։ |

II. Վոչ լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների V-X դասարանների ուսուցիչների, դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների աշխատավարձը վճարելու կարգը

| | |
|---|---|
| 15. Ի՞նչպես վարձատրել դպրոցներում և մանկավարժական ուսումնարաններում աշխատող պրոֆեսորներին և դոցենտներին։ | 15. Առաջին կարգով։ |



| | |
|---|---|
| 16. Ի՞նչպես վարձատրել գիտական աստիճան (գիտությունների թեկնածուի կամ դոկտորի) ունեցող ուսուցիչներին։ | 16. Առաջին կարգով։ |
| 17. Ի՞նչպես վարձատրել Բուհի վոչ պակաս յերրորդ կուրսն ավարտած, ինչպես նաև Բուհի 4-րդ կուրսում սովորող ուսուցիչներին։ | 17. Յերկրորդ կարգով։ |
| 18. Ի՞նչպես վարձատրել մանկավարժական ուսումնարանի ծավալով կրթություն ունեցող կամ Բուհի յերեք կուրսից պակաս ավարտած ուսուցիչներին։ | 18. Յերկրորդ կարգով՝ հանած 10 % |
| 19. Ի՞նչպես վարձատրել բարձրագույն կրթություն ունեցող, բայց վոչ իր մասնագիտությամբ (ավարտել է պատմալեզվաբանական ֆակուլտետ, բայց ավանդում է մաթեմատիկա) աշխատող ուսուցիչներին։ | 19. Յերկրորդ կարգով։ |
| 20. Ի՞նչպես վարձատրել ագրոմանկինստիտուտ կամ Կ. Լիբկնեխտի անվան ինստիտուտը ավարտած ուսուցիչներին։ | 20. Ձեռք բերած մասնագիտությանը համապատասխանող առարկաներ ավանդողներին առաջին կարգով, այլ առարկաներ ավանդողներին՝ յերկրորդ կարգով։ |
| 21. Ի՞նչպես վարձատրել Լոխվիցկայա-Սկալոնի բնագիտական դասընթացներն ավարտած ուսուցիչներին։ | 21. Վորպես քիմիայի և բնագիտության դասատուներ՝ առաջին կարգով, այլ առարկաների գծով՝ յերկրորդ կարգով։ |

| | |
|---|---|
| 22. Ի՞նչպես վարձատրել առևտրական (կոմերչեսկիյ) ինստիտուտ ավարտած ուսուցիչներին։ | 22. Որպես մաթեմատիկայի և աշխարհագրության դասատուներ՝ առաջին կարգով, այլ առարկաների գծով՝ յերկրորդ կարգով։ |
| 23. Ի՞նչպես տարիֆիկացիայի յենթարկել այն անձանց, վորոնք ավարտել են ժողովրդական կրթության կադրերի վորակի բարձրացման կենտրոնական ինստիտուտի մասնագիտական ֆակուլտետները։ | 23. Առաջին կարգով, յեթե աշխատում են իրենց մասնագիտությամբ։ |
| 24. Ի՞նչպես տարիֆիկացիայի յենթարկել Մարքսիզմի-լենինիզմի ինստիտուտն ավարտած ուսուցիչներին։ | 24. Որպես պատմության և սահմանադրության դասատուներ՝ առաջին կարգով, այլ առարկաների գծով՝ յերկրորդ կարգով։ |
| 25. Ի՞նչպես վարձատրել Ն. Կ. Կրուպսկայայի անվան Բադլուսինստիտուտն ավարտած ուսուցիչներին։ | 25. Ինստիտուտի դպրոցական բաժինն ավարտած և իրենց ձեռք բերած մասնագիտությանը համապատասխանող առարկաներ ավանդող դասատուներին՝ առաջին կարգով, այլ առարկաների գծով՝ յերկրորդ կարգով։ |
| 26. Ի՞նչպես վարձատրել ժուռնալիստիկայի ինստիտուտ ավարտած ուսուցիչներին։ | 26. Յերկրորդ կարգով։ |
| 27. Ի՞նչպես տարիֆիկացիայի յենթարկել այն ուսուցիչներին, վորոնք ավարտել են Օտար լեզուների «Ին-Յազ» | 27. Որպես օտար լեզուների դասատուներ՝ յերկրորդ կարգով։ |



| | |
|---|---|
| հեռակա ուսուցման ինստիտուտը և տարբերկյա թղթակիցների դասընթացները։ | |
| 28. Ի՞նչպես տարիֆիկացիայի յենթարկել այն ուսուցիչներին, վորոնք ավարտել են Մոսկվայի Բարձր ռազմա-մանկավարժական դպրոցը։ | 28. Առաջին կարգով՝ մասնագիտությամբ աշխատելու դեպքում։ |
| 29. Ի՞նչպես տարիֆիկացիայի յենթարկել Բարձրագույն գեղարվեստական-տեխնիկական ինստիտուտն ավարտած նկարչություն և գծագրություն ավանդող ուսուցիչներին։ | 29. Առաջին կարգով։ |
| 30. Ի՞նչպես վարձատրել յերգեցողության այն դասատուներին, վորոնք ավարտել են նախկին Պետերբուրգի յերգչական կապելլայի խմբավարական (ռեգենտական) դասարանը։ | 30. Առաջին կարգով։ |
| 31. Կրկնապատկվո՞ւմ է, արդյոք, ուսուցչի մանկավարժական ստաժը հեռակա մանկավարժական ուսումնական հաստատություններում, առանց մանկավարժական աշխատանքից կտրվելու, հեռակա ուսուցման ժամանակի համար։ | 31. Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1939 թ. դեկտեմբերի 25-ի վորոշման 8-րդ կետով վերացված է Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի 1934 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը հեռակա ուսուցման ժամանակի ընթացքում մանկավարժական ստաժը կրկնապատկելու մասին։ Այսպիսով ուսուցչի մանկավարժական ստաժը վորոշելու ժամանակ առանց մանկավարժական աշխա- |

| | |
|---|---|
| | տանքից կտրվելու հեռակա ուսուցման ժամանակաշրջանը չի կրկնապատկվում։ |
| 32. Վճարվո՞ւմ է, արդյոք 10 %-ային հավելում վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների այն դիրեկտորներին և ուսմասվարներին, վորոնք ունեն 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժ։ | 32. 25 տարվա և ավելի մանկավարժական ստաժի համար դիրեկտորներին և ուսմասվարներին 10 %-ային հավելում չի վճարվում։ |
| 33. Ի՞նչպես վարձատրել դըպրոցների այն դիրեկտորներին և ուսումնական մասի վարիչներին, վորոնք ունեն որական յերկուսից ավելի դաս։ | 33. Միմիայն ամեն մի առանձին դեպքում, յերբ որական 2-ից ավելի դաս ունենալու համար կա շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի վարիչի հատուկ թույլտվությունը՝ պետք է լրիվ վճարել ուսուցչի համապատասխան դրույքի հաշվով։ |
| 34. Կարո՞ղ են, արդյոք, փոփոխության յենթարկվել դիրեկտորների և ուսմասվարների դրույքները դպրոցի դասարանների և աշակերտների թվի ավելանալու կամ պակասելու կապակցությամբ։ | 34. Նոր ուսումնական տարվա սկզբին դպրոցի դասարանների և աշակերտների կոնտինգենտի փաստական թվի ավելանալու կամ պակասելու կապակցությամբ համապատասխանորեն պետք է փոփոխության յենթարկվեն նաև վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների դրույքները՝ այդ պաշտոնների համար սահմանված վարձատրության չափի սահմաններում։ |
| 35. Ի՞նչպես վարձատրել գյուղական այն միջնակարգ դպրոցների դիրեկտորներին և ուսումնական մասի վարիչներին, վորոնք ունեն 880-ից ավելի աշակերտ և 22-ից ավելի դասարան։ | 35. Այդպիսի դիրեկտորները և ուսումնական մասի վարիչները վարձատրվում են այն դրույքներով, վորոնք նախատեսված են 400-ից ավելի աշակերտ և 10-ից ավելի դասարան ունեցող դպրոցների համար։ |
| 36. Ի՞նչպես վարձատրել միջնակարգ դպրոցի ուսումնական մասի վարիչներին յերկու վճարովի աշխատողներ լինելու դեպքում։ | 36. Վարձատրել միջնակարգ դպրոցի ուսումնական մասի վարիչների համար սահմանված դրույքներով՝ նայած աշակերտների ու դասարանների այն թվին, վորն սպասարկում է նրանցից յուրաքանչյուրն առանձին։ |
| 37. Թույլատրվո՞ւմ է, արդյոք, վարձատրել վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցների դիրեկտորներին և ուսումնական մասի վարիչներին դասարանի ղեկավարության համար։ | 37. Դասարանի ղեկավարությունը դպրոցի դիրեկտորին կամ ուսումնական մասի վարիչին կարող է հանձնվել միմիայն բացառիկ դեպքում (յերբ պակաս է V-X դասարանների ուսուցիչների թիվը, յերբ դպրոցն ունի մի հերթի պարապմունք ու դիրեկտորի և ուսումնական մասի վարիչի մանկավարժական բեռնվածությունն որական յերկու դասից ավելի չէ), յուրաքանչյուր առանձին դեպքում շրջանային (քաղաքային) ժողկրթբաժնի վարիչի հատուկ թույլտվությամբ։ |

38. Ինչպես են վարձատրվում տարրական դպրոցների վարիչները, վորոնք ամբողջովին կամ մասամբ ազատված են դասատվական աշխատանքից։

38. Տարրական դպրոցների վարիչները, վորոնք ամբողջովին ազատված են դասատվական աշխատանքից, վարձատրվում են 1936 թ. ապրիլի 9-ի որենքով սահմանված դրույքներով՝ առանց լրացուցիչ վարձատրություն ստանալու դասերի համար։ Իսկ նրանք, վորոնք մասամբ են ազատված դասերից, վարձատրվում են 1936 թ. ապրիլի 9-ի որենքով սահմանված դրույքներով՝ առանց լրացուցիչ վարձատրություն ստանալու այն դասերի համար, վոր նրանք ավանդում են ավյալ դեպքում նրանց համար հատկապես սահմանված կրճատված նորմայից դուրս։

## ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ, ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԵՎ Համ Կ(բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՎՈՐՈՇԵՑԻՆ․

I

1. 1937 թվի փետրվարի 1-ից բարձրացնել տեխնիկումների (բացի մանկավարժական տեխնիկումներից, վորտեղ աշխատավարձը բարձրացված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ



Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշմամբ), բժշկական և իրավագիտական միջնակարգ դպրոցների, նկարչական, յերաժշտական, թատերական ու պարարվեստի ուսումնարանների և բանֆակների դասատուների, դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների աշխատավարձը, նրանց համար սահմանելով ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով)․

| Աշխատողների կատեգորիաներ | Քաղաքներում և բանվորական ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի |
| ա) Մայրենի լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, պատմության, բնագիտության, ոտար լեզուների, ինչպես նաև հատուկ առարկաների դասատուներ՝ համապատասխան տեխնիկումներում, դպրոցներում, ուսումնարաններում և բանֆակներում. | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . | 340 | 380 | 405 | 310 | 350 | 380 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . | 295 | 325 | 350 | 275 | 305 | 325 |
| բ) Գծագրության, աշխատանքի, ֆիզկուլտուրայի և ռազմական գործի դասատուներ . . . | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . | 275 | 305 | 330 | 245 | 275 | 295 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . | 240 | 260 | 280 | 220 | 240 | 260 |

| | Ուսումնական հաստատություններում ըստ սովորողների թվի | |
|---|---|---|
| | մինչև 300 հոգի | 300 հոգուց ավելի |
| գ) «ա» կետում մատնանշված ուսումնական հաստատությունների դիրեկտորներ. | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . . . . | 475 | 570 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . . . | 310 | 380 |
| դ) «ա» կետում մատնանշված ուսումնական հաստատությունների ուսումնական մասի վարիչներ. | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . . . . . . . . . . | 335 | 430 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . . . . . . . . | 260 | 330 |

2. Միայն միջնակարգ կրթություն ունեցող ուսուցիչների համար աշխատավարձի դրույքներ սահմանել 10 % պակաս լրիվ բարձրագույն կրթություն չունեցող դասատուների (II կարգ) դրույքներից։

3. 1-ին հոդվածում մատնանշված ուսումնական հաստատությունների դասատուների աշխատավարձի վերևում սահմանված դրույքները վճարվում են որական 3 ժամվա դասատվական աշխատանքի համար։

Յերաժշտական, նկարչական, թատերական ու պարարվեստի ուսումնարաններում անհատական խմբակային ուսուցման համար և ֆիզկուլտուրայի տեխնիկումներում գործնական վարժությունների համար վերևում սահմանված դրույքները վճարվում են որական 4 ժամվա աշխատանքի համար։

4. Տեխնիկումների, բժշկական ու իրավագիտական միջնակարգ դպրոցների, նկարչական, յերաժշտական, թատերական ու պարարվեստի ուսումնարանների դասատուների, դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թվի ապրիլի 9-ի վորոշման 3-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածները։



II

1. 1937 թվի փետրվարի 1-ից բարձրացնել անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչների, մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների ու դիրեկտորների աշխատավարձը, սահմանելով նրանց համար ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով).

| Աշխատողների կատեգորիաներ | Քաղաքներում և բանվորական ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական աշխատանքի ստաժ | | | | | |
| | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տարի | 10 տարուց բարձր | 5 տարուց պակաս | 5 տարուց մինչև 10 տարի | 10 տարուց բարձր |
| ա) Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչներ. | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն մանկավարժական կրթություն . . | 230 | 255 | 280 | 205 | 230 | 255 |
| II կարգ՝ վորոնք ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն . . . . . . . . . . . . | 205 | 220 | 240 | 185 | 200 | 215 |
| բ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցների I, II և III դասարանների ուսուցիչներ (վորոնք համապատասխանում են յերեխաների վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի V-VII դասարաններին). | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . | 280 | 315 | 340 | 255 | 290 | 315 |
| II կարգ՝ վորոնք ավարտել են յերկամյա ուսուցչական ինստիտուտներ . . . . . . . . . | 255 | 280 | 305 | 230 | 255 | 270 |
| գ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցների IV, V և VI դասարանների ուսուցիչներ (վորոնք համապատասխանում են յերեխաների միջնակարգ դպրոցի VIII-X դասարաններին). | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն բարձրագույն կրթություն . . . . . | 305 | 340 | 360 | 275 | 315 | 340 |
| II կարգ՝ վորոնք չունեն լրիվ բարձրագույն կրթություն . . . | 265 | 290 | 315 | 245 | 270 | 290 |

| | Դպրոցներում ըստ սովորողների թվի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մինչև 90 հոգի, ըստ ստաժի | | | 90-ից մինչև 150 հոգի, ըստ ստաժի | | | 150 հոգուց ավելի, ըստ ստաժի | | |
| | Մինչև 5 տարի | 5-10 տարի | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարի | 5-10 տարի | 10 տարուց ավելի | Մինչև 5 տարի | 5-10 տարի | 10 տարուց ավելի |
| գ) Մեծահասակների բարձր տիպի դպրոցի դիրեկտորներ. | | | | | | | | | |
| Քաղաքներում և բանվորական ավաններում | 290 | 315 | 340 | 300 | 325 | 350 | 325 | 350 | 380 |
| Գյուղական վայրերում . . . . . . . . | 245 | 270 | 300 | 260 | 290 | 315 | 290 | 320 | 340 |

2. Մեծահասակների բարձր տիպի՝ մինչև 150 սովորող ունեցող դպրոցների դիրեկտորների համար 1-ին հոդվածի «գ» կետում սահմանված աշխատավարձի ամսական դրույքները պարունակում են՝ ամենօրյա յերկժամյա պարտադիր դասատվական աշխատանքի վարձատրությունը:

3. Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչներին, վորոնք միաժամանակ այդ դպրոցների վարիչներն են հանդիսանում, վարչական աշխատանքի համար լրացուցիչ կերպով վճարվում է.

մինչև 50 սովորող ունեցող դպրոցներում՝ ամսական 30 ռուբլի.
մինչև 100 » » » » 40 »
100-ից ավելի» » » » 50 »:

250 սովորողից ավելի ունեցող դպրոցների վարիչներն ազատվում են դասատվական աշխատանքից և վարձատրվում են համապատասխան կարգի ուսուցչի դրույքով, ամսական 50 ռուբլի հավելումով:

4. Աշխատավարձի վերևում սահմանված դրույքներն անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչներին



վճարվում են ամենօրյա 4 ժամվա փաստացի ուսումնական պարապմունքի համար, իսկ մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչներին՝ ամենօրյա 3 ժամվա փաստացի ուսումնական պարապմունքի համար:

Դասատվական աշխատանքի լրացուցիչ ժամերը վարձատրվում են լրացուցիչ կերպով, նայած ստացած դրույքին:

5. Անգրագետների ու կիսագրագետների դպրոցների ուսուցիչների վրա, մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների և դիրեկտորների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թվի ապրիլի 9-ի վորոշման 2-րդ, 3-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածները, իսկ մեծահասակների բարձր տիպի դպրոցների ուսուցիչների համար նաև 5-րդ հոդվածը:

## III.

1. 1937 թվի փետրվարի 1-ից բարձրացնել մանկատների և ընդունարան-բաշխիչների դաստիարակների և այլ աշխատողների աշխատավարձը, նրանց համար սահմանելով ամսական աշխատավարձի հետևյալ դրույքները (ռուբլիներով).

| Աշխատողների կատեգորիաներ | Քաղաքներում և բանվորական ավաններում | | | Գյուղական վայրերում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ստաժ | | | Ստաժ | | |
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց ավելի | 5 տարուց պակաս | 5-10 տարի | 10 տարուց ավելի |
| ա) Մանկատների դաստիարակներ և աշխատանքի գծով հրահանգիչներ. | | | | | | |
| I կարգ՝ վորոնք ունեն մանկավարժական միջնակարգ կրթություն . . . . . . . . . | 230 | 255 | 280 | 205 | 230 | 255 |
| II կարգ՝ վորոնք ունեն միջնակարգ կրթություն . . . . . | 205 | 220 | 240 | 185 | 200 | 215 |

| Աշխատողների կատեգորիաներ | Ստաժ | | |
|---|---|---|---|
| | 5 տարուց պակաս | 5-ից մինչև 10 տարի | 10 տարուց բարձր |
| բ) Մանկատների և ընդունարան-բաշխիչների վարիչներ, որոնք ունեն մինչև 100 յերեխա . . . . . . . . . . . . | 320 | 350 | 380 |
| որոնք ունեն 100–150 յերեխա . | 330 | 360 | 390 |
| որոնք ունեն 150 յերեխայից ավելի . . . . . . . . . . . | 360 | 390 | 420 |

2. Մանկատների այն դաստիարակների և աշխատանքի գծով հրահանգիչների համար, որոնք չունեն լրիվ միջնակարգ կրթություն, աշխատավարձի դրույքները սահմանել 10 % ցածր (II կարգի) ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող դաստիարակների ու հրահանգիչների դրույքների համեմատությամբ, իսկ այն դաստիարակների և աշխատանքի գծով հրահանգիչների համար, որոնք ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն, աշխատավարձի դրույքները սահմանել 10 % բարձր՝ (I կարգի) միջնակարգ մանկավարժական կրթություն ունեցող դաստիարակների ու հրահանգիչների դրույքների համեմատությամբ։

3. Մանկատների ուսումնա-դաստիարակչական մասի վարիչների համար աշխատավարձի դրույքները սահմանել 20 % ցածր մանկատների վարիչների դրույքների համեմատությամբ։

4. Աշխատավարձի վերևում սահմանված դրույքները մանկատների դաստիարակներին վճարվում են օրական 5 ժամվա դաստիարակչական աշխատանքի համար, իսկ աշխատանքի գծով հրահանգիչներին՝ օրական 4 ժամվա աշխատանքի համար։

Աշխատանքի լրացուցիչ ժամերը վարձատրվում են լրացուցիչ կերպով՝ ստացած դրույքին համապատասխան։

5. Հատուկ ռեժիմ ունեցող մանկատների (մտավորապես հետամնաց յերեխաների, խուլ ու համրերի, կույրերի և այլն) դաստիարակների, աշխատանքի գծով հրահանգիչների և ընդունարան-բաշխիչների դաստիարակների աշխատավարձի դրույքները սահմանել 25 % բարձր նորմալ տիպի մանկատների աշխատողների համար սահմանված աշխատավարձի դրույքների համեմատությամբ։



6. Սահմանել, որ մանկատների վարիչները և մանկատների ուսումնա-դաստիարակչական մասի վարիչները կարող են դասատվական աշխատանք կամ աշխատանքի գծով հրահանգիչների աշխատանք կատարել մանկատներին կից դպրոցներում, միայն այն դեպքում, յեթե նրանք ունեն մանկավարժական պատրաստություն և այն էլ օրական 2 ժամից ոչ ավելի։

Այդ աշխատանքը վարձատրվում է լրացուցիչ կերպով, յելնելով ուսուցչի կամ աշխատանքի գծով հրահանգչի դրույքի հաշվից։

7. Մանկատների և ընդունարան-բաշխիչների վերևում մատնանշված աշխատողների վրա համապատասխանորեն տարածել «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թվի ապրիլի 9-ի որոշման 3-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածները։

«Իզվեստիա», 1937 թ. 11/I № 9 (6171)

## ՑՈՒՑԱԿ ԱՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Ե ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ԱՎԱՐՏՄԱՆԸ

### Ա. Նախահեղափոխական շրջան

1. Ուսուցչական սեմինարներ՝ արական և իգական։
2. Զեմստվոյական և մինիստրական ուսուցչական դպրոցներ։
3. Յեկեղեցական ուսուցչական դպրոցներ։
4. Մանկավարժական 8 դասարան ունեցող իգական գիմնազիաներ։
5. Արական գիմնազիաներ և ռեալական ուսումնարաններ՝ յերկարատև, առնվազն 3 ամսվա մանկավարժական դասընթացներ անցած լինելու պայմանով։
6. Ուսուցչի կոչման էքստերնատ՝ ուսումնական օկրուգներին և մանկավարժական ուսումնական հաստատություններին կից։
7. 1872 թվի օրենսդրության համաձայն կազմակերպված քաղաքային ուսումնարաններ և բարձրագույն տարրական ուսումնարաններ՝ յեռամյա մանկավարժական դասընթացներ ավարտելու պայմանով։
8. Մանկավարժական՝ դասարան ունեցող յեպարխիալ ուսումնարաններ (ռուսական)։
9. Սանասարյան դպրոց (Կարին)։

*10. Ցերամյան դպրոց (Վան):*

*11. Կենտրոնական վարժարան (Կոստանդնուպոլիս):*

*12. Արամյան վարժարան (Սեբաստիա):*

*13. «Իդադիյե» (միջնակարգ ուսումնական հաստատություն մինչ Քեմալական Թյուրքիայում):*

*14. Ռոբերտ քոլեջ (Կոստանդնուպոլիս):*

*15. Ցեփրատ քոլեջ (Խարբերդ):*

*16. Ամերիկյան Հայ-Ոկուլ՝ 11-ամյա (Վան):*

*17. Գերմանական յերկսեռ դպրոց՝ 10-ամյա (Վան):*

*18. Կենտրոնական Հայկազյան դպրոց՝ 11-ամյա (Վան):*

*19. «Սուլթանիյե» (լիցեյ, քոլեջ Թյուրքիայում):*

*20. Արղության դպրոց:*

*21. Հովնանյան դպրոց (Թբիլիսի):*

*22. Գայանյան դպրոց (Թբիլիսի):*

*23. Գայանյան դպրոց (Յերեվան):*

*24. Հռիփսիմյան դպրոց (Բաքու):*

*25. Հռիփսիմյան գիմնազիա (ռուսաց, Յերեվան):*

*26. Թեմական դպրոցներ (Յերեվան, Շուշի և Նոր-Նախիջևան):*

*27. Գևորգյան ճեմարան՝ դասարանական բաժին (Եջմիածին):*

*28. Լազարյան ճեմարան՝ դասարանական բաժին (Մոսկվա):*

*29. Ներսիսյան դպրոց (Թբիլիսի):*

### Բ. Հետհեղափոխական շրջան

*Մանկավարժական թեքումով 9-ամյա դպրոցներ՝ յերկաբատև, առնվազն 3 ամսվա, մանկավարժական դասընթացներ անցած լինելու պայմանով:*

*2. 10-ամյա դպրոցներ, մանկավարժական դիսցիպլիններ անցած լինելու և այդ դիսցիպլիններից մանկավարժական տեխնիկումներին կից սահմանված քննությունները տված լինելու պայմանով:*

*3. Մանկավարժական տեխնիկումի հեռակա դասընթացներ՝ այդպիսիք ավարտելու մասին դիպլոմ ստացած լինելու պայմանով:*



## ՑՈՒՑԱԿ ԱՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ

### Ա. Նախահեղափոխական շրջան

*1. Արական գիմնազիա՝ 7 դասարան:*

*2. Ռեալական ուսումնարան՝ 7 դասարան:*

*3. Իգական գիմնազիա՝ 7 դասարան:*

*4. Հոգևոր սեմինարիա (ռուսական):*

*5. Ցեպարխիալ ուսումնարան (ռուսական):*

*6. 1872 թվի օրենսդրության համաձայն քաղաքային ուսումնարաններ և բարձրագույն տարրական ուսումնարաններ (նրանցից հետո տարրական դպրոցի ուսուցչի կոչում տվող միամյա ուսուցչական դասընթացներ անցնելով):*

### Բ. Հետհեղափոխական շրջան

*1. Միջնակարգ դպրոց:*

*2. 9-ամյա և 10-ամյա դպրոցներ:*

*3. Այլ (վոչ մանկավարժական) տեխնիկումներ:*

## ՑՈՒՑԱԿ ԱՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Է ՑԵՐԿԱՄՅԱ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆԸ

### Ա. Նախահեղափոխական շրջան

*1. Ուսուցչական ինստիտուտներ:*

*2. Հանրակրթական մանկավարժական դասընթացներ Մոսկվայում, հիմնված Ալֆերովի կողմից:*

*3. Մոսկվայի մանկավարժական դասընթացներ՝ Տիխոմիրովի անվան դաստիարակչուհիների և ուսուցչուհիների ընկերության կից:*

*4. Նախկին Մարիյան գերատեսչության (*Мариинское ведомство*) կանանց մանկավարժական ինստիտուտ Պետերբուրգում:*

*5. Պետրոգրադի Մարիյան իգական գիմնազիային կից մանկավարժական դասընթացներ՝ ռուսաց լեզվի, մաթեմատի-*

կայի, աշխարհագրության և օտար լեզուների մասնագիտություններով:

6. Ուսումնական օկրուգներին և ուսուցչական ինստիտուտներին կից դասընթացներ միջնակարգ ուսումնական հաստատությունների բարձրագույն տարրական ուսումնարանների դասատուների համար:

7. Այն անձինք, վորոնք սահմանված կարգով իրավունք են ստացել դասավանդելու բարձր տիպի (նախահեղափոխական) դպրոցներում, եքստերնատ քննություն տալով ուսումնական այն հաստատությունների լրիվ դասընթացի համար, վորոնք իրավունք են տալիս հանրակրթական առարկաներ դասավանդել բարձր տիպի դպրոցներում:

8. Այն անձինք, վորոնք ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատությունների յերեք կուրս:

9. Կանանց մանկավարժական դասընթացներ Օդեսսայում:

10. Լոխվիցկայա-Սկալոնի նոր լեզուների կանանց դասընթացներ Պետրոգրադում:

11. Բոբրիշչևա-Պուշկինայի նոր լեզուների կանանց մասնագիտական դասընթացներ Պետրոգրադում:

12. Պոլտորացկայայի օտար լեզուների կանանց դասընթացներ Մոսկվայում:

13. Ստեպանովայի օտար լեզուների դասընթացներ Մոսկվայում:

14. Լավրենտիևայի օտար լեզուների դասընթացներ Պետրոգրադում:

15. Ֆրանսերեն լեզվի կառավարական դասընթացներ Պետրոգրադում:

16. Պետրոգրադի Նիկոլայան և Ալեքսանդրյան և Մոսկվայի Յեկատերինյան կանանց ինստիտուտներին կից օտար լեզուների դասընթացներ:

17. Գեղարվեստական ուսումնարաններ [Մոսկվայի Ստրոգանովսկի, Պետրոգրադի Շտիգլիցի, Լոձի, Պենզայի և այլն (նկարչական)]:

18. Նոր լեզուների Վարշավայի մանկավարժական դասընթացներ:

19. Օտար լեզուների Դեմիդովի դասընթացներ Պետերբուրգում:

20. Վանի «Վարժապետանոց»:



21. Պոլսո ուսուցչանոց:

22. Վենետիկի (Իտալիա) Մուրադ-Ռաֆայելյան վարժարան:

### Բ. Հետհեղափոխական շրջան

1. Ժողովրդական կրթության ինստիտուտներ:
2. Ժողովրդական լուսավորության ինստիտուտներ:
3. Ժողովրդական կրթության պրակտիկ ինստիտուտներ:
4. Կոմբուհներ:
5. Բարձրագույն ուսումնական հաստատության յերեք կուրս:

## ՑՈՒՑԱԿ ԱՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Ե ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆԸ

### Ա. Նախահեղափոխական շրջան

1. Բոլոր համալսարանները:
2. Պետրոգրադի պատմա-լեզվաբանական ինստիտուտ:
3. Բեզբորոդկոյի պատմա-լեզվաբանական ինստիտուտ Նեժինում:
4. Բեստուժևի բարձրագույն դասընթացներ Պետրոգրադում:
5. Գերյեյի կանանց բարձրագույն դասընթացներ Մոսկվայում:
6. Ժողովրդական լուսավորության մինիստրության գերատեսչության կանանց բարձրագույն դասընթացներ (պատմա-լեզվաբանական և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետները):
7. Աշխատավոր կանանց փոխօգնության ընկերության կանանց ժամանավոր բարձրագույն դասընթացներ Խարկովում:
8. Շելապուտինյան ինստիտուտ:
9. Պետրոգրադի պսիխո-նևրոլոգիական ինստիտուտ:
10. Տեխնոլոգիական ինստիտուտներ:
11. Պոլիտեխնիկական ինստիտուտներ:
12. Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարաններ:

13. Լեռնային ինստիտուտներ։

14. Ելեկտրո-տեխնիկական ինստիտուտներ։

15. Պետրովսկի-Ռազումովսկիի ակադեմիա։

16. Գյուղատնտեսական ինստիտուտ Նովո-Ալեքսանդրիայում։

17. Մանկավարժական ակադեմիա Պետրոգրադում։

18. Ֆրեբելի բարձրագույն դասընթացներ Պետերբուրգում և Կիևում։

19. Մոսկվայի գեղարվեստական ընկերության (նկարչական) կենդանագրության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարաններ։

20. Կոնսերվատորիաներ (յերաժշտության գծով)։

21. Գեղարվեստների Ակադեմիային կից մանկավարժական գեղարվեստական դասընթացներ Պետրոգրադում (նկարչության գծով)։

22. Հոգևոր ակադեմիաներ (պատմական և գրական բաժինները)։

23. Արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունները (մասնագիտական առարկաների գծով)։

24. Եջմիածնի Գևորգյան ճեմարան (լսարանը)։

## Բ. Հետհեղափոխական շրջան

1. Բոլոր պետական համալսարանները։

2. Մանկավարժական ինստիտուտներ և Ուկրաինական ԽՍՀ ժողովրդական կրթության ինստիտուտները։

3. Կրուպսկայայի անվան Կոմունիստական դաստիարակության ակադեմիան։

4. Բոլոր բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները (մասնագիտական առարկաների գծով)։

5. Գիշերային մանկավարժական ինստիտուտները։

6. Հեռակա մանկավարժական ինստիտուտները։

7. Այն անձինք, վորոնք եքստերն քննություններ են տվել վերոհիշյալ ուսումնական հաստատություններից մեկն ու մեկի համար։

8. Մոսկվայի 2-րդ Պետհամալսարանին կից բարձրագույն գիտա-մանկավարժական դասընթացներ։

9. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանը։



Ծանոթություն.— *1. Ռազմական առարկաների դասատուները, վորոնք ավարտել են ռազմական դպրոցներ և ԲԳԿԲ հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացները, ինչպես նաև նախկին կադետական կորպուսները և ռազմական ուսումնարանները, անկախ յերկուտարվա ուսուցման ժամկետով, հավասարեցվում են լիավարտ միջնակարգ կրթություն ունեցողներին։*

*Ռազմական առարկաների այն դասատուները, վորոնք ավարտել են ԲԳԿԲ ակադեմիաները, հավասարեցվում են լիավարտ բարձրագույն կրթություն ունեցողներին։*

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԿ. ԽՍՀ ԱՅՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ԻՐԱՎՈՒՆՔ Ե ՎԵՐԱՊԱՀՎՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՑԻԱՅԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

### 1. Մանկավարժական ուսումնարաններ

1. Յերևանի մանկավարժական ուսումնարան (հայկական)։
2. Յերևանի մանկավարժական ուսումնարան (ռուսական)։
3. Յերևանի մանկավարժական ուսումնարան (ադրբեջանական)։
4. Լենինականի մանկավարժական ուսումնարան (հայկական)։
5. Լենինականի մանկավարժական ուսումնարան (ռուսական)։
6. Կիրովականի մանկավարժական ուսումնարան։
7. Գորիսի մանկավարժական ուսումնարան։
8. Նոր-Բայազետի մանկավարժական ուսումնարան։
9. Վաղարշապատի մանկավարժական ուսումնարան։
10. Կալինինոյի մանկավարժական ուսումնարան։
11. Դիլիջանի մանկավարժական ուսումնարան։
12. Ղամարլուի մանկավարժական ուսումնարան։
13. Ղափանի մանկավարժական ուսումնարան։

### Մանկավարժական ինստիտուտներ

1. Յերևանի մանկավարժական 4-ամյա ինստիտուտ։
2. Յերևանի պետական ուսուցչական ինստիտուտ (հայկական)։
3. Յերևանի պետական ուսուցչական ինստիտուտ (ռուսական)։

# Ց Ա Ն Կ


Էջ

Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին (ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Համ Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի 1936 թ. ապրիլի 9-ի վորոշումը). . 3

Ուսուցիչների աշխատավարձի վճարման կարգի մասին ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. ապրիլի 10-ի վորոշումը). . . . 11

ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ հրահանգը հաստատելու մասին (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. մայիսի 19-ի № 884 վորոշումը) . . . . . . . 13

ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի հրահանգը ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձը բարձրացնելու մասին» վորոշումը կենսագործելու մասին (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. 10/V վորոշման հավելված). . . . . . . . 13

Բոլոր ժողկրթբաժինների վարիչներին և ՏՄԴ քաղկոմ-շրջկոմների նախագահներին . . . . . . 21

Հարց ու պատասխանի թերթիկ ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների տարիֆիկացիայի վերաբերյալ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 9-ի՝ «Ուսուցիչների և դպրոցական այլ աշխատողների աշխատավարձի բարձրացման մասին» վորոշման կիրառման կապակցությամբ. . . . . . 22

Տեխնիկումների, բանֆակների, մեծահասակների դպրոցների և մանկատների անձնակազմի աշխատավարձը բարձրացնելու մասին (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի 1937 թ. վորոշումը). . . . . . . . 30

Ցուցակ այն ուսումնական հաստատությունների, վորոնց ավարտումը հավասարեցվում է մանկավարժական տեխնիկումի ավարտմանը։

Ցուցակ այն ուսումնական հաստատությունների, վորոնց ավարտումը հավասարեցվում է ընդհանուր միջնակարգ կրթությանը. . 39

Ցուցակ այն ուսումնական հաստատությունների, վորոնց ավարտումը հավասարեցվում է յերկամյա ուսուցչական ինստիտուտների ավարտմանը. . . . . . . . 39

Ցուցակ այն ուսումնական հաստատությունների, վորոնց ավարտումը հավասարեցվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ավարտմանը. . . . . . . 41

Ցուցակ ԽՍՀՄ այն դպրոցական հաստատությունների, վորոնց իրավունք է վերապահվում ուսուցիչների ատեստացիայի կապակցությամբ քննություններ ընդունելու. . . . . 43

ՀՀ Ազգային գրադարան
NL0192955

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ. 50 ԿՈՊ.

15389

О заработной плате
учителей и других
школьных работников